

որովհետեւ նուիրատուք՝ վաճառականութեան պատճառաւ՝ ճիշտ չեն վճարեր շահը, իսկ շատերն և ոչ կարողութիւն ունին խոստ-մունքնին կատարելու: Յամի 1873 մանչերու վարժարանին մէջ 97 աշակերտ կար, իսկ աղջկանցն՝ 41. 45 մանչ և 19 աղջիկ ձրի էին, աղքատութեան համար: Տղոց բերած թոշակն էր 12-24՝ ր. իսկ աղջկանց՝ 12-20: Վեց վարժապետ կար, և բաց ի սոցանէ՝ աղջկանց վարժարանին մէջ՝ հսկող կ'ին մի, միանգա-մայն անոնց ձեռագործի ուսուցիչ, հանդերձ մէկ օգնականով: Վարժարանացս մէջ կ'աւանդէին, Ս. Գրոց պատմութիւն, հայ և ռուս լեզուներ, թուաբանութիւն, բնական պատմութիւն, ընդ-հանուր աշխարհագրութիւն, ուրուագրութիւն և գեղագրութիւն. իսկ աղջկունք կ'ուսանէին նաեւ ձեռագործ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԷ, ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ

Ե ԳԵՆԵՏԵՐԿ

ԺԶ դարու Հայոց ի վենետիկ պէսպէս նշանաւոր երևութից մէջ՝ մէկն ալ է երկու կաթողիկոսաց գալուստն. և թերեւս և առաջին անգամն ըլլայ Հայոց եկեղեցւոյ զխոյն գալն յարեմոստ, թէպէտև ԺԱ դարէն կարծուի Գրի-գորի վկայաւորի հանդիպիլն ի Հռոմ, և իրմէ վերջը Ռուբինեանց իշխա-նութեան ատեն՝ այլոց, բայց ասոնք գեռ երկրայականք են: Իսկ այս ատեն եկողաց առաջինն Ստեփանոս Ե Սալմասացի (ի կէս դարուն, 1550) իր մէկ կոնդակին մէջ օր գրեր է ի Հռոմ, կը վկայէ հօս կենալն վեց ամսէ աւելի. կոնդակին պատճառն ալ է վկայական մի՝ զօր տուեր է (սեպտեմբ-բերի 6ին) Պետրոս անուամբ Եթովպացի երիցու մի՝ ձեռնադրելով զնա արք-եպիսկոպոս իր երկրին, Մահլուդայ գաւառին (որոյ աթոռն ալ էր ի Ֆա-րակոյ), ի փոխարէն իրեն ըրած ժառայութեանն և առաջնորդութեան առ Սրբազան Պապն և առ մեծամեծս, միանգամայն և մեծ սիրոյն « ի վերայ մեր ազգին » . որոյ համար և իրեն երեսփոխան և վաքիլ կը կարգէ Հայոց՝ « Մեծ Հռոմայ էկողին և գնացողին . զորն օր սա կամենա՝ ընդունէ, և զօր չկամենա՝ ճանապարհ զնէ. վասն այս պատճառի, զի բազում անբան մարդիկ կու գան և նախատինք կու վաստակեն Հայոց ազգիս » : — Թող-լով իրրեւ մեր նպատակէն դուրս քննել կաթողիկոսին գործերն ի Հռոմ, մեր յիշելըն է իր հանդիպիլն ի վենետիկ, որոյ հաւաստիքն է յանձնա-

բարութեան կամ ընծայական գիր մի, զոր պիտաւորք Հայոց հպատակք
 Թահմազայ յաջորդին Շահ Իսմայէլի (որոյ համար զիրենք Պարսիկ կ'անուա-
 նեն), գրած են առ Դուքան և առ մեծամեծ պաշտօնեայս Հասարակապե-
 տութեան վերնետկոյ. գրուածին հայերէն բնագիրն չէ գտուած, այլ իտա-
 լերէն թարգմանութիւնն կայ, յորում կը պակսին (ցանկայի) անուանք գրու-
 ղացն, այն ատենի մեծամեծաց Հայոց. գուցէ առանձին ծածուկ նշանակած
 ըլլան, վասն զի զգուշաւոր գրուածքին քանի մի խօսքէն զուշակուի որ քա-
 ղաքական խնդրոյ համար էր կաթողիկոսը զրկելին. պէտքէն թուականօք
 գրուած է թուղթն « ի 6970 ամի աշխարհի սկզբան, 1547 ամի Մարդ-
 » եղութեան Աստուծոյ, 1400 ամի (նոր) Թուականին Հոռովմայ, ի 292
 » (996) Թուականին Հայոց, յերկիրն Արարադայ, ի կողմանս Եփրատայ և
 » Տիգրիսի մեծամեծ գետոց, ընդ հովանեաւ Մարկատ (Marcat)¹ լերին,
 » ուր է տուն Դոյի, ի սահմանս վաղարշապատ քաղաքին, մերձ յաստուածա-
 » շէն եկեղեցին Էջմիածնի^(*) » : Թղթոյն այս վերջաւորութեան համեմատ
 է սկզբնաւորութիւնն ալ, որոյ վերնագիրը գրած է թարգմանն « Աղբրսագիր
 » տերանց Հայոց, (Supplica delli Signori Armeni). Ո՛ր աստուածահիմն
 » և քրիստոսաշէն և 'ի Հոգւոյն Սրբոյ պահպանեալ քաղաք վերնտիկ, զոր
 » ունին և բնակեն ուղղափառ տեաքքն վերնետք. ո՛վ ամենայն քրիստոնէից
 » և ամենայն մոլորեցոց նաւահանգիստ և ապահով օթեման. դու ամենայն
 » քաղաքաց քրիստոնէից հարսն ես, և ամենայն աշխարհի հաւատարիմ օթա-
 » բան. Աստուած ներշնչեց ի կուրծս հիմնադրաց նորին, որուն զարմանայ ամե-
 » նայն աշխարհ, թէ ի՞նչպէս հիմնեալ ես ջրոց վրայ, այնպէս լաւ գետե-
 » դուած, ինչպէս կ'ըսէ մարգարէն. Գնացք գետոց ուրախ առնեն, և ալիք
 » ծովուց ամրանան. Թագուհի (Imperatrice) ծովու և ցամաքի. յիրաւի
 » մարգարէական հոգւով քեզի համար ըսուած է, և քեզի համար կայ և
 » մնայ ըսուածն. Որոտաց Տէր ի վերայ ջուրց բազմաց : Ո՛վ աստուածա-
 » պահ քաղաք, որպէս Գիրք կ'ասեն, Հրեշտակք չուր նորա զնովու ես. Աս-
 » տուած դրաւ ի քեզ մշտնջենաւոր թագաւորութեան ակօռը. քեզմով շատ
 » անգամ քրիստոնէութիւնն պաշտպանեցաւ : Ուրեմն կեցցես ուրախ, որ քեզի
 » նշան և պաշտպան ունիս զմեծ Առիւծն, ամենէն ուժովն և զօրաւորն ի
 » կենդանիս, զՄարկոս աւետարանիչ, Դպիր Բարձրելոյն, և զըօշ յաղ-
 » թական թշնամեաց :... Ո՛վ վեհ քաղաք վերնտիկ, հիմնեալ ի բանն
 » կենդանի, և իմաստուն ակթեանական ակօռ բովանդակ աշխարհի, զիտնագոյն
 » ապաստանարան և անյաղթ վահան հոյակապ Խաչիկոյ (Invincibil scudo

1 Scritto nel principio del mondo 6970 anni, et dalla Incarnazione di Dio 1547, e dal n. di Roma 1400, et dal principio dei Armeni, 996, nella regione di Arrarath, alla parte di Efrate et Tigri fiumi grandi; sotto l'ombra del monte Marcat, dove è la casa di Noe, per mad. della città Vagachabath, nella parte della Iddio-fabricata Chiesa, che ha il santo Unigenito.

» della superba Italia), մանաւանդ թէ պաշտպան բովանդակ քրիստոնէութեան, թէ՛ խոհեմութեամբ և թէ զինուոր, նուաճելով զյանգուզն թշնամին ճշմարիտ հաւատոց: Քեզ, ո՛վ գեղեցիկ Վենետիկ, քեզ կը վայլէ ճշմարտապէս կոշտիլ թագունի աշխարհի, ամենագեղեցիկ զիրքով, ուր առաջնապէս կը հոսին հարստութիւնք ծովու և բարիք ցամաքի: Եւ թէպէտ հեղինակութեամբ Առաքելոյն Պետրոսի՝ Հոռոմ քաղաքն է գերելիսն⁽¹⁾, սակայն զու վեհ քաղաքը Վենետիկ, զու բանալի և փականք ես բովանդակ քրիստոնէութեան »... Յետ այլ եւս այսպիսի գովութեանց՝ կը դառնայ գրիշն առ դուքսն, զինքը « շնանձրացընելու համար », և կը մաղթէ իրեն անկէ՝ « որ կը վարէ գերկինս և կը պահէ քաղցր ներդաշնակութեամբ՝ յանդադար շարժման, միշտ օրհնութեամբ պահպանել, բոլոր քու զաւակօրդ: Եւ որովհետեւ պարզ ես մտօք, որպէս հաւատամ և սրտիւ, սովորական կերպովդ բնգունէ իմ գրեթէ բարբարոս խօսուածս, և մեր տգիտութեան պակասութիւնը լեցընես քու գերագոյն իմաստութեամբ:...

Մենք գիտեմք ստոյգ որ մեր Հայ ազգն ի տերանց Վենետիկաց շատ սիրուած և գգուած է. որոյ համար՝ նախ ի կողմանէ Առաքելոյն Բարդուղիմէայ և Թադէոսի ողջոյն կը զրկեմք սուրբ նշխարաց Ս. Մարկոսի՝ առաքելոյ և աւետարանչի. և ի կողմանէ մեր համօրէն եպիսկոպոսաց, վարդապետաց և բովանդակ կղերին, և ամենայն ազնուականաց և բովանդակ մեր ազգին՝ խոհարհելով կը պատուեմք և կ'ողջունեմք ձեր փառաւոր և յաղթական զորքը, համբուրելով զոտս ձեր ամենապայծառ Գլխոյն, Սրբազան Ժողովոյ կատարեալ թուով Տասանց, ըստ օրինակի 10 Պատուիրանաց, կատարեալ խորհրդարանի Քառասնից, Ժողովոյ աստեանակալ ծերունեաց (Pre-gadi), և քու ամենայն իմաստուն պաշտօնէից. գերայդքելի Պատրիարքին, և ամենայն առաջաւորաց (prelati), քահանայից, քարոզչաց, վարդապետաց, և քո բովանդակ հաւատարիմ ժողովրդեանդ: — Եւ մենք խեղճ Հայքս ի մասին Պարսից, ի ներքոյ խիստ տառապանաց այլադեմից, կը սպասեմք ձեր գալուն, ինչպէս սուրբ նախահարքն սպասէին փրկչին Քրիստոսի: Գիտեմք որ ի խոհեմութենէ տերանց Վենետիկաց պիտի սկսի մեր փրկութիւնն և ազատութիւնն: Ե՛րուդարկեմք մեր պատրիարքը Ստեփանոս, շատ պատանաւաց համար, առ մեծապայծառ տէրութիւն ձեր, որ յարգութիւն ընծայէ ձեզ, և մեր կողմանէ յանձնէ զմեզ առ ձեզ, և յետոյ շնորհք Ընէք իրեն որ կարենայ երկալ և համբուրել զոտս ամենա սրբազան Պապին: Աստուծոյ փառք: »

Այս գրուածէն զատ վկայութիւն մի չեմ գտած Ստեփանոս կաթողիկոսի գալուն և գործոց ի Վենետիկ, բայց շատ հաւանական է որ բաւական աստեւ

1 E benchè per l'autorità di Pietro apostolo la città di Roma tiene il principato, nientemeno tu, alma città di Venezia, sei la chiave e serraglio di tutta la cristianità.

մի կեցած ըլլայ ի քաղաքիս, և հետն ալ մեծաւոր, փոքրաւոր և բնկերներ ունեցած ըլլայ, և յառաջ քան ի Հռոմ՝ այս տեղ Դքսին յայտնած իր գալուն պատճառը կամ պատճառները, ըստ բանից աղերսագրին, որ բաւական հմուտ և ծանօթ կ'երեւի վենետիկ տէրութեան կառավարութեան, պաշտօնէից և զորինաց, միանգամայն և վկայ Հայոց յաճախելուն և բնդունելութեանն ի վենետիկ:

Քառորդ մի դարու յետ Ստեփանոսի եկած է ի վենետիկ միւս (2) Ստեփանոսի աթոռակից կաթողիկոսն Թադէոս, և զառւած նշանաւոր դիպուածի մի աստն, ռոսկալի միանգամայն և սխրալի, այն ահաւոր մարդածախ ժանտամահի տարին, յորում Հայն Աստոն իր հնարած դեղովն շատեր ազատեց և տէրութեան երախտաւոր ճանչցուեցաւ. (տես Բազմ. ծ.) Դուքսն, պաշտօնեայք և բոլոր քաղաքացիք ուխտեցին Աստուծոյ՝ ժանտախտը զաղբեցընելու համար շինել եկեղեցի մի, ինչպէս յիշած եմք. խնդիր եղաւ տեղւոյն վրայօք՝ զանազան կարծեօք, վերջապէս հաւանութիւն և վճիռ եղաւ կանգնել քաղքին դիմացը և անոր մասն համարուած Երանգա կամ Ճիռնտեգա ըստած երկայնաձեւ կղզւոյն (որոյ համար և Երկայն փուշ կ'անուանէր, Spina lunga) վրայ շինել, և յանձնել հօն նոր եկած և հաստատուած վեղարաւոր (զափուշին) եւ աղքատ կրօնաւորաց, որ այն աստն կը բնակէին մօտ Ս. Մարիամ Հրեշտակաց կոչուած փոքրիկ եկեղեցւոյ մի՝ և ուրիշ երկու անոր նմանեաց քով, զորոնք շինեւր էր տիկինն Ֆիդրեցա՝ քոյր վերջին Հայոց Թադէոսի անուանեալ կատարինեայ Գոռնարոյ (տես Բազմ. ծ.) և սոյն ինքն Թադէոսին, կ'ըսուի, իր խոստովանա՛օր խրատով կտակած էր հօն շինել տալ եկեղեցի մի և Անապատ մի առանձնաւոր միայնակեցաց համար: Եկեղեցեաց կամ մատրանց շինութեան տարիներուն (1530—41) այն կողմերը եկած էին յիշեալ վեղարաւորքն, և խեղճ բնակարան մի հաստատած էին, զոր քանի մի տարի վերջ (1548) սաստիկ փոթորիկ մի կործանելով, ստիպուեցան Ֆիդրենցայի շինածներուն քով զալ և բնակիլ, հաւանութեամբ Պապին և վենետիկ Դքսին. սա հիմայ վճռեց յանձնել անոնց շինուելու ուխտական եկեղեցին. և երբ հրաշալի կերպով զոյթէ մէկէն ի մէկ դադրեցաւ ժանտախտն, բոլոր քաղաքացիք վենետիկոյ՝ ի գլխէն մինչեւ ի յետին ռամիկն՝ ուզեցին թափօրով և նաւակամբով երթալ նոր շինուելու եկեղեցւոյ տեղը. բայց թափօրին զխաւոր կազմողք էին եկեղեցական ուխտն և բարեպաշտ ընկերութիւնք, զաս զաս և կարգաւ, պղտիկներէ կամ վարի աստիճանի դասէն մինչեւ ի բարձրագոյնն, որ ամենէն վերջը կու գար, և էր Պատրիարքն վենետիկոյ. ասոր անմիջապէս առջեւէն կ'երթար՝ մեր Թադէոս կաթողիկոսն, (21 յուլիսի, 1577), իրմէ ալ առաջ Ս. Մարկոս մեծ եկեղեցւոյն աւագերէցն. որ է ըսել՝ Թափօրին մէջ յետ պատրիարքին վենետիկոյ ամենէն պատուաւոր տեղն ունէր Հայոց պատրիարքն, ինչպէս և կը վայլէր իր աստիճանին. և կերպով մի աղօթակից և օրհնիչ եղաւ թէ իր հօն զտուած ազգայնոց և թէ զազգայինս հիւրընկալող քաղաքացեաց: Ինչո՞ւ համար

եկեր էր կաթողիկոսն ի վենետիկ, և ե՞րբ, և ասից ո՞ւր գնաց. չեմ գիտեր. իսկ ո՞րչափ ատեն բնակեցաւ. — քանի մի ամիս (*vi stette alquanti mesi*) կ'ըսէ Կեսար վելէյիոյ՝ եղբայր գերահռչակ պատկերահանին (*Տիցիսոնոյ, որ՝ 100 տարուան ծեր հասակովը վերոյիշեալ ժանտամահին զո՞ր եղաւ, 1576*). Կեսար ալ անուանի և պիտանի պատկերահանական՝ գործոյ մի կը զբաղէր այն ատեն, զանազան ազգաց և տեղեաց զգեստուց տարազները օրինակելով, որոց մէջ կան և Հայք՝ Փոքր Ասիոյ և Ելիլիկոյ կողմանց, որոց ազնուականաց հազուադէպ նման կը գտնէ կաթողիկոսին հագածին, քիչ տարբերութեամբ. (*con simile habito, con poca differenza*.) և այսպէս կը ներկայացընէ:

Թաղէսի այս ատեններ յիտալիա գտուելուն՝ կարծեօք մէկ պատճառն կրնայ ըլլալ 1575 տարւոյ Հոռովմայ կրօնական յօրեղեան տարին, յորում՝ պատմիչ մի Յօրեղինից կը վկայէ՝ որ շատ Հայք ալ եկած էին. զնոյն վկայէ և զեսպանն վենետոաց որ ի Հոռովմ, նոյն կամ նախընթաց տարին Հայոց հանգիպած բանի մի առթիւ: Ասոնք այս Յօրեղինի հոգեւոր շնորհաց սիրով վենետիցի նաւով մի կու գային Ասորւոց ծովեղերէն, ապաւնքներ ալ բերելով. երբ Տոսկանայի գրեութեան Գրեու հասան՝ այն տէրութեան մեծ նաւ մի (կալէոն) բռնեց վենետիցի նաւը, և մեր Հայոց ստացուածքը գրաւեց՝ իբրեւ այլազգի հպատակաց. Հայք ի վենետիկ դիմեցին առ դուքսն, նոյնպէս և ի Հոռովմ առ դեսպան գրեսին. ասոնց գլուխ կեցաւ իրենց ազգակիցն Աղեքսանդր, Թերեւս նոյն Հայոց տան վերականգուն՝ զոր յիշեցինք ասկէ առաջ (տես թաղմ. ծ.), և հետն առնելով գնաց ի Ֆիորենցա, անոր դքսին ազաչելու որ հրամայէ Հայոց ինչքը տալու անոնց. դուքսն մերժեց խնդիրը և խնդրողները, ըսելով, թէ փոխանակ ուրիշի դիմելու պէտք էր որ Ս. Պապէն զիր բերէիք, որ ինձի պատուիրած է այլպիսեաց ստացուածքը բռնել. Աղեքսանդր այս բանս գրեց ի Հոռովմ (15 յանու. 1575) առ Գուքսն վենետիկ, նոյնպէս՝ գրել առաւ նոյն օր և անոր զեսպանին. սա գրովը կը հարցընէր իր պըքսին՝ թէ ի՞նչ պէտք է ընել. Գուքսն ալ պատասխանեց, որ պաշտօնապէս բան մի չընէ, այլ իմացընէ Հայոց՝ որ եղածին վրայ կը տհաճինք և կը Եանանք օգնել թուրքաց հպատակաց ալ: Քանի մ'օր վերջը (29 յանու.) զեսպանն նորէն գրելով իմացուց զըքսին՝ որ Հայք Տոսկանայի դըքսին հարազատ Մէտիչի կարդինալը միջնորդ բռներ են, և Պապն ալ գրեր է ի Ֆիորենցա՝ որ Հայոց խնդրածը տրուի: Չեմ տարաւուսի որ այնպէս ալ եղած ըլլայ, և Հայք թէ ապրանքներն վատորկած ըլլան թէ Յօրեղեանը:

Գրուածիս այս մասին նպատակ Հայոց կաթողիկոսաց ի վենետիկ գալուն յիշատակն՝ խառնուելով և վենետիկոյ ընդ Հոռովմայ, անցողաբար ըսենք որ կարծելի է Սոյ Սզարիա կաթողիկոսին ալ՝ վերոյիշեալներէն դար մի վերջը՝ անցնիլն ի վենետիկ, յերթալն ի Հոռովմ, ուր երկար ատեն ապրելով՝ 92 տարուան վախճանած է ի սկիզբն անցեալ դարու (1710):

Թեաւ կաթողիկոսաց նախապատիւ Պատրիարք մ'ալ կոստանդնուպօլսի

Թովմաս, կը յիշուի ի վերջ դարուս (ԺԶ) եկած և բնական ի վենետիկ, բայց աթոռէն հրաժարելէն ետեւ. քաղքէն ելնելու տետնն ալ իր եղբօր կամ քեռ որդւոյն Անկիւրացի Խտրոյպաչիի կը թողու իր կահ ու կարասիքը և ի փոխ տուած ստակները, զոր Մարկոս Մոնրատտ Հայ սէնաթն ժողովելով ի պարտականաց կը յանձնէր անոր:

Աւելորդ է այս տեղ յիշելն ալ թէ ասոնցմէ դարերով առաջ և ետքը՝ շատ Հայ եպիսկոպոսներ եկած և աւելի կամ պակաս ժամանակ կեցած են ի վենետիկ, ինչպէս յիշած ալ եմք զոմանս, Թովմաս (տես Բազմ. ծ.), Մարտիրոս Եզնկացի (Բազմ. ծ.), և մեր պատմութեան ներկայ ժամանակիս (1543) Հայոց տան մէջ բնակող եպիսկոպոսն, որուն իր հայրենիքը դառնալու ատեն՝ տէրութեան և Հայոց տան Հոգաբարձուք քանի մի դրամ տուին յողորմութիւն. — Բամի 1561 Նիկոլ ԱՅՈՍ եպիսկոպոս Նախնականի Միաբանողաց. — Մեր պատմածներուն աւելի մօտ տարիներ կը յիշուին ի 1565, Մեղիքիսեղ եպիսկոպոս, զոր յիշէ Աբգար տպագիրն Սաղմոսի « առ ոտս Միւլքիսեղեկ եպիսկոպոսին, ի մայրաքաղաքն ի վանատիկ, ընդ հովանեաւ Ս. Մարկոս աւետարանչին, ի Հայոց Հոգեւորն, ի ժամանակ Սիմովնի. » ինչպէս յետինս Հայոց տնպահն կամ վերակացուն էր, հաւանական երեւի Աբգարու խօսքէն՝ որ Մեղիքիսեղեկ եպիսկոպոսն ալ անոնց հոգեւոր առաջնորդն ըլլայ որոյ « առ ոտս » յիշելն հաստատուն կեցող սոք երեւցնէ և ոչ պարզապէս անցորդ մի. բայց և ոչ միշտ կեցող համարելու է, այլ գոնէ քանի մի տարի, և յետոյ իր երկիրը կամ աթոռը դարձող: 1560 թուականէն մինչեւ ի 1627՝ Մեղիքիսեղ կաթողիկոսն ալ համբելով՝ հինգ Մեղիքիսեղ եպիսկոպոսք յիշուին մեզի ծանօթք ի պատմութեան կամ ի յիշատակարանս գրոց. զուցէ ասոնցմէ մէկն ըլլայ, մանաւանդ Աբգարու հայրենեաց մերձաւորն և յիշեալն յետոյ ի 1600, ի Սեբաստիա:

Աւելի մերձաւոր ժամանակ, տասն տարի Մեղիքիսեղէն ետեւ (1575) յերեւան կ'ելնէ աներեւութանալու մօտ (այսինքն՝ մահուան) և զուցէ այն տարի նոր սկսած ժանտախտին ազդեցութեամբ Զաքարիա որդի Կիրակոսի եպիսկոպոս մի, որոյ թեմն ալ յիշուի իր իտալերէն գրել տուած կտակին մէջ, այլ չեմ կրնար ստուգել այդ տեղը կամ անունը, որ գրուած է *Rassan* կամ *Rasson*. Ռասսան, Ռասսոն. համառօտիւ կ'ըսէ կտակագիրն. « Ես Զաքարիա եպիսկոպոս Ռասսանայ որդի հանգուցեալ Կիրակոսի » Հայոյ... հետեւ գտուելով իմ տունէս և հայրենիքէս, և չուզելով ինձմէ » վերջ առանց կարգի և պատրաստութեան թողուլ իմ բաներս, կանչել » տուի Պետրոս—Աբրահամ հասարակաց նօտարը, իմ բնակութեանս տունը » ի Ս. Բուկիան Թաղի (ուր որ էր և Հայոց տունն), և ստորագրեալ Թարգմանաց բերնով, քանի որ միտքս առողջ է, թէ և մարմնով հիւանդ եմ, » ուզեցի գրել տալ իմ վերջին կամքս և կարգաւորութիւնս... Կը թողում » իմ Հայ սպասաւորիս Թովհաննոս՝ իր ըրած և գեռ ընող ծառայութեան » և զիս հոգալուն համար՝ 15 սկուտ, զգետներս և ինչ որ սննիմ այս

» տանս մէջ. Սիմոնի վերակացուի տանն Հայոց (a messer Simon d'Armenia vardian della casa d'Armenj) սկուս մի: Ունիմ 14 սկուտի չափ ալ, և կ'ուզեմ որ իմ սպասաւորս զաստնք ծախսէ հոգւոյս և թաղման համար, ինչպէս որ իրեն յարմար երեւի. և նոյն սպասաւորս ալ զօթէ իմ հոգւոյս համար »: — Կտակին ներքեւ անմիջապէս կը ստորագրէ քաղզէարէն Յովհաննէս քաղդէացի մի. յետոյ « Յովհանն Սոսիան » միջնորդ (սանտէր) որ Թարգման եղայ կամաց կտակողին՝ Սիմոն Հայուն հետ և վերոյգրեալ Քաղդէացի Յովհաննիսի, և ստորագրեցի յանուն Պր. Սիմոնի, որովհետեւ նա գրեյ չէր գիտեր » ⁽¹⁾: Ասկէ վերջ կը ստորագրեն երկու խտալացիք. Թարգմանն որ և միջնորդ Սոսիան՝ գրեթէ անտարակոյս Հայ էր, նոյնպէս Քաղդէացի Յովհանն ալ՝ չէր կտակողին սպասաւորն՝ զոր որոշակի Հայ կ'անուանէ տէրն, այլ ո՞վ և ինչո՞ւ միջամուտ կ'ըլլայ այս քանիս այդ Քաղդէացին. — Ի հարկէ ծանօթ էր եպիսկոպոսին ալ, Սիմոնի ալ, Թերեւս և Հայոց հոգեւոր մէջ բնակէր: Կտակն գրուած է յօգոստոսի 27 (1575), երեք օր վերջը (30 օգոստ.) ներկայացուած է պաշտօնէից տէրութեան ⁽²⁾. Ըսել է թէ այն 3 կամ 4 օրերու մէջ և հաւանօրէն ամսուն 30ին վախճաններ է Զաքարիա. այն տարւոյն մահագիրքն կորած են, որով հանգուցելոյն տարիքն և հիւանդութեան տեսակն և թաղման տեղն ալ անյայտ մնան, որ հաւանօրէն է կամ Ս. Յովհաննու եկեղեցին, կամ Ս. Գեորգ կղզին, ուր էր օրինաւոր հանգստարանն Հայոց:

Զաքարիայի ոչ ժամանակին մերձաւորութեամբ, այլ թեմին անձանթօթութեամբ նման՝ հետաքննելի մնայ իրմէ իբր 50 տարի վերջը (1623) վլադրան եպիսկոպոս մ'ալ, Մանգինո՞ մականուանեալ (Mangino), և ոչ միայն եպիսկոպոս կոչուի այլ և արքեպիսկոպոս Hyfanայ Մեծ Հայոց քաղաքի մի կամ գաւառի մի. այսպէս գրած է նոտարն, որոյ առջեւ (ի մայիսի 19) վկայեն քանի մի Հայք, որոց զխաւորն Գեորգ Գոռլիոյ կամ Գոռլիոս օճնսար (Cochiglio, Cochiglia) (որ և շատ զիպուածոց մէջ կը յիշուի 40 տարուան միջոց, և իր մականունն ալ ստուգութեան կարօտ է), թէ այդ արքեպիսկոպոսն 53 տարուան է (ուրեմն ծնեալ յամի 1570), երկայն և թաւ մօրուօք, լեզուին վրայ ալ սպի կամ նշան մի կայ վիրաց. ուղղափառ է հաւատով հռոմէական, բարի բարուք և սրբակեաց, հայերէնէ և թուրքերէնէ զատ ուրիշ լեզու չի գիտեր: Այսչափ է նոտարական գրուածոյն սուած անգեկութիւնն, յորմէ յիմացուիր ինչ պատճառաւ տրուիլն. արդեօք վարդան

1 Zuane Sulian Sanser fui interprete della volontà del Testador, insieme con Messer Simon Armeno et il soprascritto Messer Zuane Caldeo, et o sottoscritto per nome di Msr. Simon, per non saper scriver lui.

2 Testamentum D. Zacharie Episcopi de Rassin Armenj, de quo fui rogatus ego Petrus Abramo Venet. Nots. sub die 27 augti. 1575. Presentatus ad Canc. eccel. 30 dicti.

կ'ուզէ՞ր բնակիլ ի Հայոց տան, թէ շնորհք մի ինդրէր ի հասարակապետութեանն, թէ յանձնարարութեան թուղթ մի։ — Մեղի հետաքննական թեւ մին անունն՝ զոր ըստ գրուածին Հիֆան կը կարդամք, չեմք կրնար ո՛ր եւ է Հայոց եպիսկոպոսական թեմի մի նմանցընել, բայց եթէ վերջի մասամբն՝ վաճառայ։ հաւանութեն նոտարն քանի մի անգամ կրկնել առած է Հայ վկայից այս անունը, բայց դարձեալ անոնց ըսածն եւ իր լսածն՝ նոյն անունն կամ ձայնն չէ։ ինչուան հիմայ ալ շատ հեղ այսպէս կը պատահի արեւելցի լեզուաց ըսածին եւ եւրոպացի ականջաց լսածին, որ երբ գրուի՝ շատ օտար եւ պլանդակ ձայն կամ կերպարանք կ'առնու։

Նոյն տարին վեց ամիս վերջը (1623 նոյեմբ. 10), նոյն Գեորգ վաճառական եւ սէնսար, Թարգման կ'ըլլայ քանի մի վկայից՝ որոց երկուքն են Երզնկացիք, Խօձայ Սէֆէր որդի Գեորգայ, եւ Աբրահամ որդի Յովհաննու Եմիլիտի (Emiliti. ահա արարկուեցի անուն մ'ալ). որք կը ներկայանան նոյն նոտարին՝ ներկայացընելով ուրիշ արքեպիսկոպոս մ'ալ Մեծ Հայոց, Ներսէս անուամբ, որոյ թեմն եւ աթոռն թէ եւ քիչ մի պլապրած՝ կը ստուգուի Բաղիշու Խնդրակատար Աստուածածինն ըլլայ. քաղքին անունն Buchis գրուած է, վանացն՝ Ս. Աստուածածին Շնորհաց՝ Թարգմանուեր է, S. Maria delle Grazie, որ Խալապուց հաճոյ անուն մ'է իրենց շատ եկեղեցեաց այսպէս կոչմամբ։ Ներսէս արքեպիսկոպոսն ըստ վկայութեան Հայոց՝ էր իբր 42 տարուան, միջակ հասակաւ, սեւ եւ բոլորակ մօրուօք, քիթն քիչ մի տափկած կամ ճգմուած (ha il naso alquanto fracato)։ Ժամանակին մօտաւորութիւնն եւ թեմին անունն քիչ մ'ալ կ'աւելցընեն զկարծիս՝ վարդապետ թեմին ալ մօտ ըլլալն, ի կողմն վանայ։ նոյնպէս ալ անշուշտ կ'աւելցընեն զգափագ գիտնալու, թէ ի՞նչ պատճառաւ այդ երկու արքեպիսկոպոսք ի խոր Հայոց եկեր են ի վենետիկ, եւ ո՛ր գնացեր, ՚ի Հոմ'իմ՝ որ աւելի հաւանական է, թէ ուրիշ կողմ։ Կարծեսցս հաւանելութիւն կ'աւելցընէ վկայից երգմամբ հաստատելն անոնց ուղղափառութեանը, եւ ոչ միայն անոնց՝ այլ եւ նոյն օրը որ վարդապետ համար վկայեցին (19 մայ. 1623), նոյն իսկ այն վկայից մէկուն համար ալ, որ է Ստեփան Փիրպաս (Pirbas) կը վկայեն Գաբիլիոյ եւ այլք, թէ ի Մեծ Հայոց է, հպատակ Պարսից Թագաւորի, 55 տարուան, միջահասակ, կլորակ եւ ճերմակ մօրուօք, որդին ալ Փիրպաս 25 տարուան, բարձրահասակ, դեռաբոյս մօրուօք, բարեպաշտ ուղղափառ հոռոմէականք են, եւ թէ ի վենետիկ եւ թէ օտար քաղաքաց մէջ այլեւայլ վաճառուց առուուոր կ'ընեն, եւ հայերէնէ ու թուրքերէնէ դատ լեզու չեն գիտեր։ Կրրնայ ալ կարծուիլ որ այս ժամանակս կրօնական խնդիր կամ զիպուած մի հանդիպած ըլլայ ի վենետիկ, Հայոց մէջ, որոյ համար հարկ ըլլայ այսպիսի տեղեկութիւններ տալ տէրութեան նոտարաց։

Բայց մեռնք մեր հիմակուան խնդրէն (Հայ եպիսկոպոսաց ի վենետիկ) եւ ժամանակէն (ԺԶ դար) ալ չհեռանալու համար, միայն ի հարեւանցի յիշենք

յաջորդ դարուն (ԺԷ) յետ Վարդանայ և Ներսիսի՝ քանի մի հանդիպող, եպիսկոպոսներ ալ, Ասաքէլ Բոպիկ, 1661—2, + ի Վուովմ. — Վարդան Յովնանեան, 1677, արքեպիսկոպոս Լեհա—Հայոց, յաջորդ Նիկոլի. — Յովսէփ արքեպիսկոպոս Զմիւռնիոյ, 1686: Յաջորդ ԺԸ դարու մէջ, ինչպէս կրնայ գուշակուիլ, Թէ բնականուր երթեւեկութեանց աւելի յաճախելուն համար և Թէ Մխիթար Աբբահօր ի վենետիկ հաստատած վանաց համար, ազգային եպիսկոպոսք ալ աւելի շատ եկած են այս քաղաքս, աւելի երկար տարիներ բնակած, և ոմանք ալ վախճանած և թաղուած ի յիշեալ վանս մեր: Եւ նոթքն մեզ են, ժամանակի կարգաւ,

1702 Յովհաննէս եպիսկոպոս մի.

1716+1738 Յարութիւն կամ Անաստաս արքեպիսկոպոս Նեոկեսարիոյ.

1726 Սահակ եպիսկոպոս.

1731—5 Յովնան եպիսկոպոս Սեբաստիոյ.

1736—57 * Մինաս՝ արքեպիսկոպոս Փէրվազեան.

1743 Կարապետ արքեպիսկոպոս Կեսարիոյ, + ի Դրիեստ.

1747—50 Աթանաս եպիսկոպոս Աբրահամեան.

1750—3 Սարգիս Սառաֆեան արքեպիսկոպոս Անկիւրիոյ.

1760 Գազար Անմարմին արքեպիսկոպոս Տրապիզոնի.

1766 Սիմոն եպիսկոպոս Գաղատացի.

17. .+1796 Յարութիւն Բասենցի արքեպիսկոպոս, + ի Դրիեստ.

1776+791 Գրիգոր Պասմանեան Պատրիարք Կ. Պօլսի, + ի Դրիեստ.

+1773 * Գրիգոր եպիսկոպոս.

+1790 * Կարապետ Մեղեան Հնձեցի արքեպիսկոպոս Տփղիսու:

Աստղանիշքն մեռած են ի վենետիկ, և թաղուած ի Ս. Գազար վանս մեր:

Վերապառնալով մեր յիշատակաց ժամանակագրական կարգին, ԺԶ դարու վերջերը, աւելի հետաքննելի և անծանօթ Անտիք անուամբ եպիսկոպոսի մ'ալ վերջին նշոյլ մի կը ծագի և կը ծածկի, մահուանը յիշատակաւ. ո՛ր և էրբն անստոյգ. այլ մահն կ'երեւի ի սկիզբն 1594 տարւոյ, տեղին ալ թերեւ ի վենետիկ. վասն զի հօս նոյն տարին (մայիսի 4ի) նոսարի սոջիւ. Կարապետ որդի թովմայի՝ անոր իրեն յանձնածը կը յանձնէ. առ Տէր Յակովբ Մարգարեան երեսփոխան կաթողիկոսի անուամբ. և յանձնաժէն կը յայտնուի որ եպիսկոպոսն նուիրակ էր կաթողիկոսին առ արեւմտեան Հայս: Կարապետի ձեռք աւանդածն էր մեծ ճերմակ տուփ մի՝ իր կնքով երկու տեղ կնքած, որոյ մէջ կային պղնձեայ աման մի ՅՂՅ լիար միւռնով. Նշխարք Սրբոց, 10 ոսկի վենետիկեան (ծեգին), մէկ կարմիր Համրիչ ոսկրէ, 6 սապոն, 4 թաշկինակ՝ երկուքն մեռաքսէ, 1 զտակ մանուշակազոյն չուխայէ, (una Tachia de panno pavonazo), և աւելի հետաքրքրական՝ 34 հայերէն տպագրեալ տոմար (Calendari in stampa in lingua Armena). հաւանօրէն տասն տարի առաջ (1584) ի Հոլովմ. Թարգմանաւ

և տպագրած Գրիգորեան Նոր տօմարն էր ձեռամբ Յովն. Տէրզնցւոյ. կըրնայ ըլլալ և անկէ առաջ (1567ին) ի Կ. Պօլիս տպագրեալ Տօնացոյցն, Կաթողիկոսն (կամ նոր ընտրուած Մելքիսեդէն, կամ Դաւիթ Ե) գրեր և պատուիրեր էր առ Կարապետ, որ հանգուցեալ Աւետիք եպիսկոպոսի թողածն յանձնէ Տէր Յակովբայ, և նա ալ այնպէս կ'ընէ ներկայութեամբ և վկայութեամբ արդէն մեզի ծանօթ Գէորգ Թարգմանի և Տնպահի Հայոց, և Առաքելի որդի Յակոբի մի, որոց կը ստորագրեն երեք ֆաղզէացիք և Ասորիք ալ (Եղիա որդի Դոմիւնիկոսի, Բենեդիկտոս ո. Յակովբայ և Անճելոյ ո. Սերուբէի). ինչո՞ւ փոխանակ Հայոց՝ այս օտարազգիք կոչուած են ի վկայութիւն. — Թերեւս աւելի ծանօթք ըլլալով ՝ եպիսկոպոսին կամ իր աւանդապահ Կարապետին. կամ իրենք աւելի ծանուցուած անձինք ըլլալով ի Վենետիկ. — իսկ մեզի՝ չկարնալով այդ Աւետիք մեռոնաբեր եպիսկոպոսին վրայ աւելի ծանօթութիւն մի գտնել, կը մնայ անոր աւանդընկալ Տէր Յակովբոյ ճանչնալ և ճանչցընել, ըստ կարելոյն:



Տպարանիս Տեսչութիւնը կը փութայ ծամուցամբել, թէ Հ. Ղ. Վ. Ալիշանի մեծագործ Հրատարակութեամ տպագրութիւնն աւարտած է, ուստի կը խմորուի այն Մեծ. Բաժանորդներէն, ոչք դրամն արդէն վճարած են, իրենց դրկուած ընկալագիրն, իսկ որոնք ամբողջ բաժանորդագիրը դեռ չեն վճարած ամբողջովին, հասցին ընկալագրոց հետ՝ մնացած մասն ևս բաժանորդագրոյն մեզ հասցընել, որպէս զի ժամանակին ընդունին զայն:

